

# ՀԱՐԹԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ



«ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ

2021-2026 թթ. Զարգացման ծրագիր

Տնօրենի հավակնորդ՝ Ս.Հունանյան  
գ. Հարթագյուղ 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան ----- 4

Դպրոցի առաքելությունը, նպատակը և խնդիրները -----5-8

Դպրոցի անձնագիրը -----9

Դպրոցի շենքի կառուցվածքը, ուսումնական /ֆիզիկական/ միջավայրը -----10-11

«ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կազմակերպական կառուցվածքը--12

Դպրոցի գործունեության իրավիճակի վերլուծություն / ՈԻԹՀՎ վերլուծություն / ----- 13-19

Դպրոցի գործունեության հիմնախնդիրները և նպատակները -----20-25

Սահմանված նպատակներին համապատասխան խնդիրներն ու գործողությունները -----26-31

ԴԶԾ-ով սահմանված նպատակների իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները- -----32-34

ԴԶԾ-ի ակնկալվող արդյունքները, գնահատման չափանիշները և վերահսկողությունը -----35

ՆԱԽԱԲԱՆ

*Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:  
/ ՀՀՍահմանադրություն, հոդված 38/*

*Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:*

*Դպրոցը հանդիսանում է այն կարևորագույն սոցիալական ինստիտուտը, որտեղ կրթվում և կերտվում են ազգային ոգին կրող անաչառ և օրինապաշտ քաղաքացիներ, որոնք էլ հանդիսանում են ապագա հասարակությունը ձևավորող առանցքային օղակը:*

*Սույն ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով դպրոցի շենքային, ֆինանսական, մանկավարժական և աշակերտական համակազմերի, ծնողական համայնքի, դպրոցում իրականացվող կրթական ծրագրերի առանձնահատկությունները՝ որպես չափորոշիչներ ընդունելով կրթական համակարգի բարեփոխումների պահանջները:*

*Այսօր մենք կանգնած ենք արդի կյանքին և մարտահրավերներին համապատասխան արտակարգ և ֆորս-մաժորային իրավիճակներում, կրթության շարունակությունը ապահովելու, կրթական նոր մշակույթ ստեղծելու հրամայականի առջև, խնդիր ունենք դպրոցն անընդհատ հարմարեցնելու գլխապտույտ արագությամբ առաջընթացող նորարարական փոփոխություններին և դրանցով անվերջ հետաքրքրված, դրանցով բառացիորեն ապրող սերնդին: Պետք է պլանավորել, ծրագրել այն գործողություններն ու քայլերը, որոնք կտանեն մեզ դեպի արդյունավետ դպրոց ունենալու նշանակետը: Զարգացման ծրագիրը դպրոցի կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որով էլ պլանավորվում է դպրոցի և մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների աշխատանքը: Դպրոցի զարգացման ծրագիրն ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝ իրավիճակի վերլուծություն, կոնկրետ նպատակների և խնդիրների սահմանում, կարևորագույն գործողություններ և միջոցառումներ, սահմանված նպատակների իրականացում, արդյունքների գնահատման չափանիշներ և այլն:*

*Հարթագյուղի միջնակարգ դպրոցում գործում է 2002թ.-ից եռագույն թիվնոցակրի պատվի շնորհման կարգ, 2005թ.-ից Վոսալ Շապուհի անվան մեդալի շնորհման կարգ՝ նվիրված գրերի գյուտի 1600 ամյակին դարձնել ավանդույթ:*

*Մեր դպրոցում ավանդույթ դարձած Նավասարդյան տոնակատարությունները 2008թ.-ից նվիրված Հայկի Մեծ հաղթանակին և Բուն Հայոց տոմարի 4500 ամյակին, որպես ռազմահայրենասիրական դաստիարակության և ազգային ինքնության խթան դարձնել շարունակական:*

*Ծրագիրն ուղղված է դեպի ապագան, դեպի նորարարականը և այն մշակելիս ցուցաբերել են ինքնուրույն մոտեցում՝ առաջնորդվելով ներքոգրյալ փոխկապակցված քայլերի հաջորդականությամբ*

## *Կրթությունը որպես լույսի արդարության հաղթանակ*

*Շարունակաբար նորացվող, զարգացող ու փոփոխվող գիտելիքը և դրա ստեղծման համար անհրաժեշտ նորարարությունը դառնում են մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ թե՛ անհատական, թե՛ ներպետական և թե՛ համաշխարհային մակարդակներում: Գիտելիքն այսօր այլևս լոկալ բնույթ չի կրում: Ցանցերի և հեռահաղորդակցման դարաշրջանում աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում: Այսօր առավել արդյունավետ ու հաջողակ են այն անհատները, խմբերն ու պետությունները, որոնք կարողանում են կիրառել նորագույն գիտելիքների ավելի մեծ տեսականի և բաց են շարունակ տեղի ունեցող փոփոխությունների առջև, բայց չեն կորցնում իրենց ինքնությունը:*

### ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

#### ԴՊՐՈՑ ԲՈՒՈՐԻ ՀԱՄԱՐ

- Դպրոց, որտեղ կարող են հաջողությամբ սովորել բոլոր երեխաները:
- Դպրոց, որտեղ կերտվում է ազգանվեր, հայրենասեր, կարողունակ, համամարդկային արժեքներով օժտված քաղաքացի:
- Դպրոց, որտեղ զարգանում է անհատը, բացահայտվում են նրա անձնային որակները, որոնք անհրաժեշտ են իրեն, հայրենիքին և հասարակությանը:
- Յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու, սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր ուղին և ժամանակահատվածը:
- Դպրոց, որտեղ սկիզբ են առնում յուրաքանչյուր երեխայի Երազանքները և հարթվում է ուղին դեպի երազանքների իրականացում:
  - Ռազմահայրենասիրական դաստիարակության ոգու ամրապնդում


Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Որպես դպրոցի հեռանկար, որպես տեսլական, որպես փիլիսոփայություն՝ ես ուզում եմ տեսնել Հարթագյուղի միջնակարգ դպրոցը որպես հաջողակների դպրոց, որտեղ կապահովվի յուրաքանչյուր սովորողի կարիքներին համահունչ անհրաժեշտ ուշադրություն, կստեղծվեն այնպիսի պայմաններ, որտեղ յուրաքանչյուր սովորող որոշակի ոլորտում կարող է ինքնահաստատվել և դառնալ հաջողակ:


Ես տեսնում եմ դպրոց բոլորի համար. դպրոց, որտեղ կարող են հաջողությամբ սովորել բոլորը, այդ թվում և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, և՛ օժտված երեխաները: Քանզի կարծում եմ, որ յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու, սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր առանձնահատկությունը:

Եվ ի վերջո, ես տեսնում եմ համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ



Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական ռազմավարական նպատակն է *դպրոցի համալիր կրթական միջավայրի ձևավորումը*, որը կապահովի հասանելի և որակյալ կրթություն՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական ոլորտի նորարարական զարգացման պահանջներին համապատասխան, ինչպես նաև կապահովի օպտիմալ պայմաններ կրթական գործընթացի բոլոր մասնակիցների զարգացման համար:



- Դպրոցի ռազմավարական նպատակին համապատասխան առաջադրվել են հետևյալ խնդիրները.
1. Դպրոցի կառավարման համակարգի արդիականացում՝ ոլորտի օրենքների պահանջներին համապատասխան:
  2. Կրթական գործընթացի կազմակերպում, կրթական տեխնոլոգիաների և բովանդակության թարմացում՝ ուղղված հոգևոր-բարոյական, մասնագիտական կողմնորոշմամբ անձի, քաղաքացու ձևավորման ապահովմանը:
  3. Դպրոցի կրթական միջավայրի տեղեկատվական թափանցիկության ապահովում:

4. Առողջ կենսակերպ ունեցող անձի ֆիզիկական զարգացման համար պայմանների ապահովում՝ հիմնված ռազմահայրենասիրական դաստիարակության վրա:
5. Կրթական գործընթացի համար անհրաժեշտ դիդակտիկ և նյութատեխնիկական բազայի համալրում:
6. Սովորողների համար համաշխարհային քաղաքակրթական ձեռքբերումների յուրացմամբ հոգևոր կատարելագործման հնարավորություն:

«Հարթագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի շենքը շահագործվել է 1999 թվականին:

«Հարթագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը շահույթ չհետապնդող, պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

Դպրոցն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական միջնակարգ /լրիվ/ ընդհանուր ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություն է:  
Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության /այսուհետ՝ հիմնադիր/:

1996թ.դեկտեմբերի 26-ին դպրոցը պետական գրանցամատյանում գրանցվել է որպես Լոռու մարզի Հարթագյուղ գյուղի միջնակարգ դպրոց, որը ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 4-ի N 601 որոշմամբ վերակազմավորվել և գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Սպիտակի կողմից անվանվելով «ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղի միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ (Վկայական՝ 03Ա 056849, 23.01.2003թ.):

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Լոռու մարզպետի 15.09.2017թ. -ի թիվ 387 Ա որոշմամբ, իսկ փոփոխությունը գրանցվել է ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում 03.06.2021թ., որը հաստատվել է ՀՀ Լոռու մարզպետի 09. փետրվարի 2021թ. թիվ 16-Ա որոշմամբ: Դպրոցի կանոնադրությունը բաղկացած է 22 թերթից, ունի իրավաբանական անձի կարգավիճակ, գինանշանով կլոր կնիք և հաշվարկային հաշիվ բանկում:

Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:

Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Հարթագյուղ, 6-րդ փ, շ. 1:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի մայիսի 30-ի N 0256 լիցենզիայի դպրոցն իրավունք ունի իրականացնելու տարրական հանրակրթական ծրագիր՝ 34 սահմանային տեղով, 2011 թվականի մայիսի 30-ի N 0250 լիցենզիայի հիմնական հանրակրթական ծրագիր՝ 45 սահմանային տեղով, 2011 թվականի մայիսի 30-ի

N 0203 լիցենզիայի դպրոցն իրավունք ունի իրականացնելու միջնակարգ հանրակրթական ծրագիր՝ 32 սահմանային տեղով:

2004 թվականից ՄԱԿ-ի հայկական հիմնադրամի աջակցությամբ, ծնողական խորհրդի մասնակի ներդրումով 1-4-րդ դասարանների աշակերտներն օգտվում են <<Կայուն սնունդ>> ծրագրից:

Վերանորոգվել է ճաշարանը ՄԱԿ-ի հայկական հիմնադրամի աջակցությամբ և դպրոցի միջոցների հաշվին:



ՄԻՋԱՎԱՅՐԸ

Դպրոցի շենքը հարմարեցված է , տիպային դպրոցական շենք ունենալն անհրաժեշտություն է :Դպրոցի հզորությունը՝ 135 աշակերտ տեղ:Դպրոցը վերանորոգվել է 2006 թվականին:


Դպրոցը միահերթ է,աշխատում է հնգօրյա աշխատանքային ռեժիմով: Գործում է 11 դասարան : Ունենք բազամահամակազմ դասարան՝ 10 և 11-րդ դասարանները երկհամակազմ են . դասարանները ապահովված են անհրաժեշտ գույքով, կա 1 առանձնասենյակ, 1 առարկայական սենյակ,1 համակարգչային և 1 նախնական զինպատրաստության սրահ՝ զենքի պահեստով, 11 դասարան, 1 ուսուցչանոց, 1 գրադարան, 1 արմաթ լաբորատորիա, 1 մարզասրահ, բացօթյա մարզահրապարակ, ֆուտբոլի դաշտ, ճաշարան, 3 սանհանգույց, նկուղ-ապաստարան:

2020 թվականից ՄԱԿ-ի հայկական հիմնադրամի աջակցությամբ, ծնողական խորհրդի մասնակի ներդրումով 1-4-րդ դասարանների աշակերտներն օգտվում են<<Տաք սնունդ>>ծրագրից:  
Դպրոցն իրականացնում է համընդհանուր ներառական կրթություն:Դպրոցն ապահովված է հակահրդեհային անվտանգության լրակազմով:Հաստատությունում առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլանը: Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով: Դպրոցն ունի համակարգչային դասարան՝ համալրված 12 համակարգիչներով, 1 պրոյեկտորով, 1 տպիչ սարքով, 1 պատճենով սարքով, ինչի շնորհիվ դասերն ավելի արդյունավետ պարապելու հնարավորություն է ընձեռնվում:

Ներկայումս դպրոցում աշխատում են 20 մանկավարժներ, 19՝ բարձրագույն մասնագիտական կրթություն, 1՝ միջին մասնագիտական կրթություն: Բոլոր ուսուցիչներն անցել են տարբեր վերապատրաստման դասընթացներ: Այս տարի ատեստավորվում են նրանց 1/5 մասը: Դպրոցի աշխատանքները ճիշտ կազմակերպելու և արդյունավետ անցկացնելու նպատակով դպրոցը համագործակցում է մի շարք դպրոցների հետ: Սերտ համագործակցում է Լոռու մարզպետարանի հանրակրթության վարչության, ԿԳՄՍ նախարարության, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԴՇՀ-ի հետ: Ընդհանուր առմամբ դպրոցում ստեղծված է բարենպաստ ուսումնական՝ կրթական միջավայր՝ ուսման որակի և առաջադիմության բարձրացման համար: Դասասենյակները կահավորված են, պայմանները հնարավորինս բավարար են: Դպրոցի աշակերտների 7,6 %-ը ԿԱՊԿՈւ աշակերտներ են:


2020-2021 ուստարում դպրոցն ունեցել է 9 շրջանավարտ, որոնցից 2-ը սովորում

են հանրապետության տարբեր բուհերում:




Դպրոցի կառավարման միացյալ խորհուրդը կազմված է 14 անձից, ծնողական խորհուրդը՝ 11, աշակերտական խորհուրդը՝ 12: Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլանավորում, գործում են օրենքով սահմանված իրենց իրավասությունների սահմաններում:

2021-2022 ուստարվա սեպտեմբերի 01-ի դրությամբ աշակերտների ընդհանուր թիվը կազմել է 105 աշակերտ, որոնցից 51-ը՝ աղջիկ, 54-ը՝ տղա:



ՀՀ Լոռու մարզի «Հարթագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի  
 Կազմակերպական կառուցվածքը



**ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՈՒԹՇՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Ստորև ներկայացված է դպրոցի գործունեության իրավիճակի վերլուծությունն ըստ դպրոցի գործունեության ոլորտների՝ համաձայն ՈՒԹՇՎ վերլուծության մոդելի:

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ (ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ)**

Ուժեղկողմը	Թուլկողմը	Հնարավորությունները
<p><b>**Դպրոցի շենքը բարեկարգ է, առկա են առարկայական կաբինետներ, ունի լոկալ ջեռուցում և շուրջօրյա ջրամատակարարում, դասասենյակները մեծ մասամբ կահավորված են :</b></p> <p><b>**Առկա է ճաշարան, Արմաթ լաբորատորիա:</b></p> <p><b>Դպրոցն ունի ինտերնետ լայն և Wi-Fi ծածկույթի սպահովում:</b></p> <p><b>**Համակարգչային սենյակ համալրված 12 համակարգչով, 1 պրոյեկտորով:</b></p> <p><b>Ունի արևային էլեկտրասնուցում, ապաստարան</b></p>	<p><b>**Մասնագիտական դիդակտիկ նյութերի սղություն</b></p> <p><b>**Լաբորատորիայի բացակայություն</b></p> <p><b>**Մարզադահլիճի կարիք ունի</b></p> <p><b>** Կոմունիկացիոն համակարգ</b></p>	<p><b>**Օնոդների, տարբեր հիմնադրամների և այլ սոցիալական գործընկերների ներգրավում դպրոցի ուսումնական միջավայրի բարելավման համար:</b></p> <p><b>**Նոր սերնդի համակարգիչների, էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերում:</b></p> <p><b>**Դպրոցի ջեռուցման համակարգի վերանորոգում /նորտաքացուցիչներ/</b></p> <p><b>***Ապաստարանի բարեկարգում , կահավորում</b></p>

Մանկավարժական համակազմ

Ուժեղ կողմը	Թույլ կողմը	Հնարավորությունները
<p>**Մանկավարժները հիմնականում ունեն Բարձրագույն մասնագիտական կրթություն:</p> <p>**Մանկավարժների կողմից դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդների կիրառում:</p> <p>**Առկա են փորձառու մանկավարժներ:</p> <p>**Առկա է մանկավարժական կոլեկտիվի բացառիկ համախմբվածություն:</p> <p>**Դպրոցն օժանդակում է կադրերի առաջխաղացմանը՝ հնարավորություն տալով աշխատանքային առաջխաղացման Ձգտողներին զարգացնելու իրենց գիտելիքներն ու հմտությունները:</p>	<p>**Մանկավարժների կողմից կրթական գործընթացում ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ կիրառելու Հմտությունների բավարար մակարդակ:</p> <p>**Տարակարգի ստացման և այլ մրցույթների մասնակցության ցածր աստիճան:</p> <p>**Մեթոդական թերթերում ամսագրերում հոդվածներով մասնակցության բացակայություն:</p> <p>**Երիտասարդ մասնագետների մոտ աշխատանքային փորձի պակաս:</p> <p>** Ուսուցիչները չունեն ԿԱՊԿՈւ աշակերտների հետ աշխատելու մեծ փորձառություն</p>	<p>**Երիտասարդ մասնագետների ուղղորդում կամ կցում Փորձառու մասնագետների:</p> <p>**աջակցել դպրոցի մանկավարժների կարողունակությունների աճին՝ սովորողների տարիքային զարգացման առանձնահատկությունների, ինչպես նաև ԿԱՊԿՈւ աշակերտների սոցիալ-հոգեբանական խնդիրների բացահայտման և դրանց լուծման գործում:</p> <p>**աջակցել բաց դասերի կազմակերպմանը և դրանց լուսաբանմանը,</p>

Ուժեղ կողմը

Թույլ կողմը

\*\*1-ից մինչև 12-րդ դասարանի աշակերտներով է ձևավորված դպրոցի աշակետական համակազմը:

\* \*Համադպրոցական միջոցառումներին աշակերտների ակտիվ մասնակցություն:

\*\* Համայնքային, մարզային սպորտային

Մրցումներում հաջողություններ և մրցանակներ:

\*\* Առարկայական օլիմպիադաների և տարաբնույթ մրցույթների ակտիվ մասնակցություն և այդ մրցույթներում մասնակի հաջողություններ

\*\*Աշակերտների թվի նվազում

\*\*Առանձին աշակերտների մոտ նկատվում է ուսման մոտիվացիայի

Ցածր մակարդակ:

\*\*Մպորտ դպրոցի և երաժշտական դպրոցի բացակայություն

\*\*3-րդ օտար լեզվի ուսուցման դժվարություններ/անգլերեն/

Ուժեղկողմը	Թույլկողմը
<p>** Դպրոցը ֆինանսավորվում է ժամանակին:</p> <p>**Բյուջետային հատկացումների ուղղությունների և ծախսերի արդյունավետ պլանավորում և իրականացում:</p> <p>**Տնտեսական և կոմունալ ծախսերի խնայողություն :</p>	<p>**Աշակերտների անկանխատեսելի արտահոսքի արդյունքում առաջացող բյուջետային հատկացումների սղություն:</p> <p>**Դպրոցի ներկայիս ֆինանսական Միջոցների սղությունը հնարավորություն չեն տալիս սահմանել և իրականացնել խրախուսական պարգևատրումներ դպրոցի աշխատակազմին աշխատանքային մոտիվացիան մեծացնելու նպատակով:</p> <p>** Դպրոցը չունի հովանավոր:</p> <p>**Դպրոցը չունի ֆինանսավորման այլ աղբյուրներ:</p>

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ուժեղկողմը	Թույլկողմը	Հնարավորությունները	Վտանգները
<p>** Ուսումնադաստիարակչական գործընթացի համակարգային, պարտաճանաչ իրականացում:</p> <p>** Դասասենյակների, առարկայական կաբինետների առկայություն</p> <p>** Գրքերով և ուսումնական ձեռնարկներով ապահովվածություն</p> <p>** Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բարոյահոգեբանական և ռազմահայրենասիրական դաստիարակությանը:</p>	<p>** Ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ առկա նյութատեխնիկական բազայի մասնակի մաշվածություն:</p> <p>** Առարկայական կաբինետներում որոշ մասնագիտական գույքի և կահավորման բացակայություն:</p> <p>** Դպրոցում 3-րդ օտար լեզվի ուսուցման դժվարություններ՝ մասնագետ չլինելու պատճառով:</p> <p>*** Տիպային դպրոցական շենքի բացակայություն</p>	<p>** Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովում:</p> <p>** Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացում էլեկտրոնային գրադարանի ստեղծման և մեդիակրթության ապահովման միջոցով:</p> <p>** Բարոյահոգեբանական և ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովում պետական, համայնքային թեմատիկ միջոցառումների մասնակցության միջոցով:</p>	<p>** Ուսումնադաստիարակչական գործընթացի առավել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայություն, պակաս, թարմացման անհրաժեշտություն:</p>

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ



Ուժեղկողմը	Թույլկողմը	Հնարավորությունները	Վտանգները
<p>**Ուսուցման գործընթացի սուբյեկտների միջև փոխհարգանքի և հանդուրժողականության մթնոլորտի</p> <p>**Դպրոցում ձևավորված է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ, ուր սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն, ինչը նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը:</p> <p>**Տաք սենյակի կազմակերպում և տրամադրում տարրական դպրոցի սաներին:</p> <p>**Արմաթ լաբորատորիայի առկայություն:</p> <p>**Դպրոցի պաշտոնական ինտերնետ կայքի առկայություն:</p>	<p>**Փոխներգործության, փոխուսուցման, ակտիվության, համագործակցություն, ինքնաարտահայտման հնարավորությունների ոչ լիարժեք ապահովում</p> <p>**Նյութական, ֆինանսական ռեսուրսների անբավարարություն՝ նորարարությունների ընդլայնման և տեխնոլոգիաների բազայի համալրման համար:</p>	<p>**Ծնողական ներդրումների օգնությամբ տաք սենյակի տրամադրման կազմակերպում 5-7 դասարանցիների համար:</p> <p>**Վճարովի հիմունքներով երկարօրյա ուսուցման կազմակերպում 1-4 դասարանցիների համար:</p> <p>**Էլեկտրոնային գրադարանի հիմնում:</p>	<p>**Ծնողական համայնքի անբավարարվճարունակության պատճառով վճարովի հիմունքներով կազմակերպվող նորարարությունների իրականացման անհնարիություն կամ սահմանափակում:</p>

**ԴՊՐՈՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**


Դպրոցի գործունեության ոլորտներում առկա հիմնախնդիրների հիման վրա սահմանվել են նպատակներ, ինչպես նաև դրանցից բխող


խնդիրներ և գործողություններ ուղղված այդ հիմնախնդիրների լուծմանը:

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅԻՐ (ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ)**

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ	ԻՐԱՎԻՃԱԿ	ՆՊԱՏԱԿ
<p>* Լաբորատորիաների կարիք ունենք</p> <p>* Ջեռուցման համակարգի վերանորոգում</p> <p>* դպրոցի բակի բարեկարգում՝ ասֆալտապատում և կանաչապատում</p> <p>* հրաձգարանի կառուցում և կահավորում</p> <p>* Ապաստարանի բարեկարգում և կահավորում</p>	<p>* Համակարգչային կաբինետը հիմնականում կահավորված է /12/ համակարգիչներով</p> <p>* Հարմարեցված սանհանգույցները դպրոցի ներսում բացակայում են:</p> <p>* Ջեռուցման համակարգի խողովակների և մարտկոցների զգալի մասը ևս ենթակա է նորով փոխարինման:</p> <p>* Ապաստարանը մասնակի կահավորված է</p>	<p>* ՏՀՏ կաբինետի կահավորում նոր սերնդի համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակով և սարքավորումներով:</p> <p>* Արևային վահանակների թվի ավելացում</p> <p>* Ջեռուցման համակարգի հիմնանորոգում:</p> <p>* Արևային վահանակների թվի ավելացում էներգոհամակարգի հզորացում</p> <p>* Ջեռուցման համակարգի հիմնանորոգում:</p> <p>* Նորոգված, կահավորված և միշտ պատրաստ գործողության ապաստարան</p>

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով անհրաժեշտ է մշտապես համագործակցել նշված կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ:





ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ	ԻՐԱՎԻՃԱԿ	ՆՊԱՏԱԿ
<p>*Մանկավարժական համակազմի պատրաստվածության և համակարգչային գրագիտության բավարար մակարդակի առկայություն:</p>	<p>*Դպրոցի սկսնակ ուսուցիչների փորձի բացակայություն կամ պակաս: *Մանկավարժների կողմից կրթական գործընթացում ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ կիրառելու հմտությունների միջին մակարդակ:</p>	<p>*Փոխադարձ դասալսումներ սկսնակ ուսուցիչներին օգնելու նպատակով: *Բարձրացնել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունը, զարգացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման կարողությունները:</p>

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ		
ՀԻՄՆԱԽՆԴԻՐ	ԻՐԱՎԻՃԱԿ	ՆՊԱՏԱԿ


\* Աշակերտական խորհրդի գործունեությունը պասիվ է և այս ուղղությամբ որևէ ինքնուրույն գործողություն իրականացնելու մոտիվացիան աշակերտների մոտ ցածր է:  
\*Սովորողների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի նվազում

\*Աշակերտական խորհուրդի աշխատանքներում նախաձեռնությունների պակաս կա  
\*Սովորողները/10-12 –րդ դասարաններում/ հետաքրքրված են միայն իրենց հետաքրքիր առարկաներով կամ այն առարկաներով, որոնք պարապում են կրկնուսույցի մոտ

\*Աշակերտական խորհրդի գործունեության ակտիվացում, կանոնակարգում և կատարելագործում:  
\* Դասապրոցեսում այնպիսի հնարների, մեթոդների կիրառում, ինչը կխթանի սովորողների մոտ ուսման նկատմամբ հետաքրքրություն,կամային ուշադրություն

Սովորողների	մասնագիտական	կողմնորոշումը

Համատեղ կենսագործունեություն և փոխհարաբերություններ



ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ( ՌԵՍՈՒՐՍՆԵՐ / ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ )

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆՊԱՏԱԿ

<p>* Տնտեսական ծախսերի գերակշռման պատճառով դժվարանում է ֆինանսական Միջոցների հատկացումը՝ ուղղված աշխատակազմի խրախուսական պարգևատրման կազմակերպմանը կամ նյութատեխնիկական բազայի հզորացմանը:</p>	<p>*Ֆինանսական միջոցները բավարարում են բյուջեով նախատեսված ծախսերը իրականացնել դպրոցի զարգացման համար միջոցները սուղ են կամ անբավարար</p>	<p>* արևային վահանակների թվի ավելացմամբ մեծացնել դպրոցի էներգոհամակարգի հզորությունը, խմայված միջոցներով համալրել դպրոցի բյուջեն և խնայողությունների հաշվին ապահովել դպրոցի արևային համակարգի միջոցով դպրոցի էներգոհամակարգի հզորացումը և էներգիասպառողից դառնալ էներգիաարտադրող և մեր հնարավորությունները կապիտալիզացիայի ենթարկել:</p>
--	---	--

<p>ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ</p>		
<p>ՀԻՄՆԱԽՆԴԻՐ</p>	<p>ԻՐԱՎԻՃԱԿ</p>	<p>ՆՊԱՏԱԿ</p>

\*Սովորողների կողմից առողջ ապրելակերպի նկատմամբ բավարար ուշադրություն չկա

\*Աշակերտների հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունները թույլ ենգարգացած:

\*Աշակերտների մոտ առաջացնել հայրենասիրական արժեքների, ազգային ավանդույթների հանդեպ հետաքարքրվածություն և ապահովել համապատասխան տեղեկատվությամբ:

\*Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում, դպրոցի կառավարման գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում:

\*Աշակերտները երբեմն չեն կարևորում առողջ ապրելակերպն ու ոչ միշտ են պահպանում առողջ ապրելակերպի կանոնները:

\*Աշակերտները երբեմն չունեն համապատասխան հմտություններ հասարակական կյանքին ինտեգրվելու համար:

\*Ծնողների մասնակցությունը դպրոցի կառավարման գործընթացում, հոգեբանամանկավարժական և ուսումնադաստիարակչական գործընթացներում ոչ միշտ են կրում ակտիվ բնույթ

\*Սովորողների առողջության պահպանմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործում:

\*Աշակերտների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում դպրոցի շրջանավարտի նկարագրին համապատասխան:

\*Ձևավորել հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ հայ քաղաքացի:

\*Սովորողների մոտ ձևավորել աշխատանքի, ազգի, նրա ավանդույթների և հաղթանակների արժևորման և կարևորման որակներ:

\*Աշակերտների մոտ ձևավորել հայրենասիրական արժեքներ:

\*Ընտանիք – դպրոց արդյունավետ համագործակցության բարելավում դպրոցի գործունեության մեջ ծնողներին ավելի ակտիվ ներգրավելու միջոցով:

ՍԱՀՄԱՆՎԱԾՆՊԱՏԱԿՆԵՐԻՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԽՆԴԻՐՆԵՐՆՈՒԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
--------	----------	------------------



<p>*ՏՀՏ կաբինետի կահավորում նոր սերնդի համակարգիչներով՝ ուսման որակի բարձրացման նպատակով:</p> <p>*Առարկայական կաբինետների նյութա-Տեխնիկական բազայի հզորացում և թարմացում:</p> <p>*Մահմանագատել դպրոցի ֆուտբոլի դաշտը շրջակա տարածքից ցանկապատելով այն բոլոր կողմերից:</p>	<p>*Եկամուտների և ծախսերի տարեկան Նախահաշվում անհրաժեշտ գույքի և ծառայությունների ձեռքբերման Համար ֆինանսական միջոցների Հատկացում և վերջիններիս ձեռքբերում:</p>	<p>*Գնումների պլանի հաստատում, Մրցույթների հայտարարտում ըստ անհրաժեշտության (1մլն. դրամը գերազանցող գնումների դեպքում), մատակարարների ընտրություն և պայմանագրերի կնքում:</p>
<p>* Հայթայթել լրացուցիչ Ֆինանսական միջոցներ, Մասնակցել տարբեր Դրամաշնորհային ծրագրերի, Ներգրավել ծնողական համայնքը, ծավալել ձեռնարկատիրական գործունեություն՝ որպես ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր:</p> <p>* Աշակերտների շրջանում խրախուսել Առողջ ապրելակերպ և ձևավորել Սպորտի հանդեպ հետաքրքրություն՝ Վճարովի խմբակների Կազմակերպման միջոցով: Կազմակերպել և իրականացնել 1-4 Դասարանցիների երկարօրյ աուսուցում՝ Ծնողներին աջակցելու և երեխաների Առաջադիմությունը բարելավելու համար:</p> <p>*Տարբեր առարկայան և</p>	<p>*Հայթայթել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ:</p>	<p>*Հետևել դրամաշնորհային ծրագրերի կողմից հայտարարություններին , ներկայացնել հայտ մասնակցելու մրցույթին: Փնտրել հովանավորներ դպրոցի բոլոր տարիների շրջանավարտներին եջ: Համագործակցել մարզային և համայնքային իշխանություններին:</p> <p>*Տրամադրվող ծառայությունների մասին Համայնքի իրազեկում:</p>

Սպորտային արտադասարանական  
Խմբակների ակտիվացում:

\*Սկսնակ ուսուցիչների կողմից  
Գնահատման մեթոդաբանության  
Յուրացում և կիրառում:  
\*Օրվա դասի ճիշտ պլանավորման  
Հմտությունների առկայության շնորհիվ  
Աշակերտների ուսման  
Արդյունավետության բարձրացում:  
\*Բարձրացնել մանկավարժական  
Համակազմի մեթոդական  
պատրաստվածությունը, զարգացնել  
ուսուցիչների համակարգչային  
գրագիտությունը և դասապրոցեսում  
տեղեկատվական ու հաղորդակցական  
տեխնոլոգիաների կիրառման  
կարողությունները:  
\*Ուսուցիչների ստեղծարարության և  
Ինքնազարգացման ուղղությամբ

\*Ուսուցիչների համար կազմակերպել  
սեմինար-դասընթացներ  
գնահատման մեթոդաբանության  
յուրացման նպատակով:

\*Գնահատման մեթոդաբանության  
Դասընթացի կազմակերպում:  
\*Ուսուցիչների կողմից գնահատման  
Մեթոդաբանության յուրացում և  
գործնականում Կիրառման հմտությունների  
ձևավորում:

<p>Համակարգված աշխատանքների Շարունակության ապահովման միջոցով Հասնել ուսման որակի բարձրացման:</p>		
<p>*Աշակերտական խորհրդի Գործունեության ակտիվացում, Կանոնակարգում և կատարելագործում: *Աշակերտների ուսման մոտիվացիայի բարձրացում, բարձր առաջադիմության ապահովում, վարքային դրսևորումների շտկում: *Ուսումնական գործընթացում այլ Մշակույթների արժեքային համակարգերի և առանձնահատկությունների կարևորում:</p>	<p>* Աշակերտական խորհրդի Գործունեությունը կրում է պասիվ Բնույթ և այս ուղղությամբ որևէ Ինքնուրույն գործողություն Իրականացնելու մոտիվացիան Աշակերտների մոտ բացակայում է: *Առկա է աշակերտների ուսման Մոտիվացիայի ցածր մակարդակ, Առաջադիմության անկում և դեհանտ Վարքի դրսևորումներ: *Այլմ շակութային արժեքների և Սովորույթների ոչ բավարար իմացություն:</p>	<p>*Յուրաքանչյուր տարի աշակերտական Խորհրդի վերընտրություն, միջին դպրոցի Դասարաններում դասղեկի ժամերի Ընթացքում դասարանական խորհուրդների և դպրոցական աշակերտական խորհրդի իրավասությունների ներկայացում, համապատասխան բուկլետների բաժանում: Իրականացվող աշխատանքների հստակ պլանավորում /ժամկետների և պատասխանատուների հստակեցում/, վերահսկողության սահմանում: *Ուսման մոտիվացիայի բարձրացման և Վարքի շտկման նպատակներով Հոգեբանական ծառայության աջակցություն՝ սեմինար-քննարկումների, խմբային աշխատաքների և անահատական հանդիպումների իրականացում: *Առկա տվյալ մշակույթի ավանդույթների, արժեքների, առանձնահատկությունների ուսումնասիրում, կարևորում, ներակայացում դասարանի բոլոր աշակերտներին:</p>

<p>*Մովորողների առողջության Պահպանմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործում:</p> <p>*Դպրոցում այնպիսի Հոգեբանամանկավարժական միջավայրի ձևավորում, որը թույլ կտա յուրաքանչյուր աշակերտի իր հնարավորություններին և հակումներին համապատասխան յուրացնել կրթական ծրագիրը և լինել հաջողակ:</p> <p>*Աշակերտների հասարակական Կյանքին ինտեգրվելու, հասարակական</p>	<p>*Մովորողների կողմից առողջ Ապրելակերպին և առողջության Պահպանմանը ոչ բավարար Ուշադրության հատկացում և կարևորման ցածր մակարդակ:</p> <p>*Աշակերտների հասարակական Ակտիվություն դրսևորելու Հմտությունները զարգացած չեն:</p> <p>*Մովորողներն ունեն Մասնագիտական կողմնորոշման և Ուղղորդվածության ցածր</p>	<p>*Կազմակերպել դասընթացներ առողջ Ապրելակերպի մասին՝ առողջության Պահպանման կարևորության և կանոնների Ներկայացման միջոցով:</p> <p>*Պարբերաբար իրականացվող միջոցառումների, դեբատների, քննարկումների միջոցով հասարակական գիտակցության բարձրացում, գործնական վարժությունների միջոցով համապատասխան հմտությունների ձևավորում:</p> <p>*Դասղեկների, հոգեբանի կողմից Մասնագիտական կողմնորոշման</p>

Ակտիվություն դրսևորելու Հմտությունների զարգացում:	մակարդակ:	Թեմաներով սեմինար-քննարկումների կազմակերպում, ընտրության համար կարևոր ուղղորդող չափորոշումների դուրս բերում, որոշման կայացման մեխանիզմի վերլուծություն:
--	-----------	---

**ԴԶԾ-ՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԴԶԾ-ի իրականացմանն ուղղված գործունեության ընթացքում հնարավոր են ռիսկեր և անորոշություններ:

ՌԻՍԿԻ ՏԵՍԱԿԸ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
<b>Նորմատիվ-իրավականոթիսկեր</b>	
<p>*Առանձին նորմատիվ-իրավական փաստաթղթերի անլիարժեքությունը, որոնք հաշվի չեն առնվել ծրագրի մշակման և ներդրման փուլում:</p> <p>*Կրթական պրոցեսի մասնակիցների պատասխանատվություն ներնուգործունեությունը կարգավորող հոդվածների և նորմատիվ իրավական փաստաթղթերի մեկնաբանման ոչ միանշանակությունը:</p>	<p>*Դպրոցի նորմատիվ-իրավական բազայի հետևողական վերլուծություն՝ վերջինիս արդիականությունը, լիարժեքությունն ու լուծման ենթակա խնդիրներին համապատասխանությունը պարզելու համար:</p> <p>*Դպրոցի ղեկավարության համակարգված աշխատանք մանկավարժական կոլեկտիվի, ծնողական համայնքի և սոցիալական ծառայության գործընկերների հետ՝ գործունեությունը կարգավորող հոդվածների և նորմատիվ-իրավական ակտերի պարզաբանման նպատակով:</p>
<b>Ֆինանսա -տնտեսականոթիսկեր</b>	
<p>*Բյուջետային ֆինանսավորման կայունություն և անբավարարություն</p> <p>*Արտաբյուջետային հովանավորչական ներդրումների և նվիրատվությունների անբավարար քանակ սոցիալական</p>	<p>*Դպրոցի բյուջեի ճիշտ և ժամանակի նպլանավորում ծրագրային միջոցառումների իրականացման համար, շտկումների իրականացում՝ հաշվի առնելով նոր ուղղություններն ու ծրագրերը, ինչպես նաև դրամի արժեզրկման գործընթացները:</p>

գործընկերների ֆինանսատնտեսական վիճակի փոփոխության պատճառով:	*Գործընկերների և լրացուցիչ ֆինանսական ներդրումների ընդլայնանն ուղղված հետևողակա նաշխատանքներ
<b>Կազմակերպչական-կառավարական ռիսկեր</b>	
*Կողմնակի կառույցների և անձանց ոչ կոմպետենտներ գրավումը ուսումնական միջավայրի և ուսումնական գործընթացի վերաբերյալ կառավարչական որոշումների կայացման մեջ:	*Դպրոցի ղեկավարության իրազեկում իրավասությունների և պատասխանատվությունների օրենսդրական դաշտի վերաբերյալ՝ հստակ կառավարչական գործունեության իրականացումը կարգավորող նորմատիվ-կատարողական ակտերի և հոդվածների համաձայն:  *բնական աղետների, առողջապահական վտանգների, հասարակական ոչ կայուն գործընթացների անմիջական ազդեցության արդյունքում նախաձեռնությունների ոչ լրիվ ծավալով իրականացում:
<b>Սոցիալ-հոգեբանական ռիսկեր (կամ մարդկային գործոնի ռիսկեր)</b>	
Առանձին մանկավարժների մոտ մասնագիտական նախաձեռնողականության և կոմպետենտության անբավարարություն՝ խորացված ծրագրերի և կրթական	*Որակավորման բարձրացման հաստատության ներքին համակարգի թարմացմանն ուղղված հետևողական աշխատանքներ: Նորարարական պրոցեսների մեջ մանկավարժների ներգրավման

տեխնոլոգիաների իրականացման համար:  
 -Առանձին մանկավարժների անպատրաստությունը կրթական պրոցեսի այլ մասնակիցների, սոցիումի գործընկերների հետ համագործակցային հարաբերություններում:  
 -Աշխատատարության պատճառով ուսուցիչների ստեղծագործական ներուժի ոչ բավարար օգտագործում:  
 - Բարձրացնել մանկավարժական համակազմի դասագործընթացի կազմակերպման հմտությունները, այդ թվում՝ ԿԱՊԿՈւ աշակերտների ամբողջական ներգրավմամբ:  
 -Ներդնել կրթության չափելի որակի վերահսկողության համակարգ:

մոտիվացիայի արդյունավետ համակարգի մշակում և կիրառում:  
 \*Խրախուսումների և խթանման տարբեր ձևերի կիրառում:  
 \*Բարձրացնել մանկավարժական համակազմի առարկայական և մեթոդամանկավարժական պատրաստվածությունը:  
 \*Կազմակերպել մեթոդական սեմինարներ գնահատման տարբեր համակարգերի մեթոդաբանության ուսումնասիրության նպատակով:Այդ աշխատանքին ներգրավել ինչպես դպրոցի առաջավոր փորձի կիրառողներին, այնպես է լգործընկեր-մանկավարժներին,հրավիրել նաև այլ փորձագետների՝ շեշտը դնելով հիմնավորված և անաչառ գնահատման վրա:  
 \*Կազմակերպել «Դեռահասների հոգեբանական իրավիճակների վերլուծություն» խորագրով պարբերական սեմինար-խորհրդատվություններ:  
 \*Ձևավորել աշակերտների կողմից պարտադիր կատարմամբ ամենօրյա չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան թեստավորման կուռ համակարգ:

*ԴԶԾ-ի իրականացումից ակնկալվող արդյունքներն են.*

1. Կրթության որակի բարձրացման նորարարական համակարգի կիրառում մանկավարժների կողմից
2. Սովորողներին հասանելի արտադասարանական գործունեության ապահովում
3. Սովորողների մոտ առողջ ապրելակերպի նկատմամբ հետաքրքրության աճ
4. Շարունակական կրթություն ստացող մանկավարժների թվի ավելացում
5. Դպրոցի գործունեության կազմակերպման ու կառավարման մեջ ներգրավված ծնողների թվաքանակի աճ
6. Ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության բարելավում
7. Կրթական գործընթացի մասնակիցների անձնական հաջողությունների աճ:

Դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունների, ուղղությունների բացահայտման և գնահատման, ինչպես նաև կրթության ընթացիկ վիճակի մասին տեղեկատվություն ստանալու, ուսումնական հաստատության արտաքին ու ներքին արդյունավետությունը վերահսկելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ԴԶԾ գնահատում՝ ըստ կրթական պարզ և բարդ ցուցանիշների համեմատական ներկայացման, ինչպես նաև համապատասխան հաշվետվությունների և այլ միջոցներով: Դրանք պետք է հասանելի լինեն դպրոցի շահառուներին (պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ, սովորողների ծնողներ, սովորողներ, համայնք և այլն):

ԴԶԾ-ում ընթացիկ աշխատանքների և արձանագրված արդյունքների վերաբերյալ անհրաժեշտ է պարբերաբար հրապարակել մատչելի (բովանդակային առումով) տեղեկատվություն դպրոցի հայտարարությունների համար առանձնացված տեղում, դպրոցի կայքում և իրազեկել ծնողներին՝ ժողովների և դպրոցական միջոցառումների ժամանակ:

ԴԶԾ-ի իրականացման գործընթացի վերահսկողությունը պետք է իրականացնել ծրագրում նախապես մշակված միջոցառումների միջոցով, որոնք պարբերաբար կարող են փոփոխվել, հարստացվել:

Դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային ծրագրային դրույթները պետք է կառուցվեն սույն զարգացման ծրագրի հիման վրա: ԴԶԾ-ն պարբերաբար տնօրենի կողմից պետք է վերանայվի և համապատասխան փոփոխություններով հանդերձ՝ հավանության արժանանա դպրոցի խորհրդի կողմից:

Որպես դպրոցի տնօրեն՝ կարող ենք իրականացնել սույն ծրագիրը դպրոցի խորհրդի՝ կոլեգիալ կառավարման մարմնի հետ լիարժեք համագործակցությամբ: Կարևորում են նաև համագործակցությունը դպրոցի բոլոր կառույցների հետ:

Սամվել Հունանյան

10.11.2021թ.